


**«Սակրալը» Միրչա Էլիադեի կրոնի ֆենոմենոլոգիայում**

*Աբրահամյան Մարիամ Ա.*

*Աստվածաբանության ֆակուլտետի կրոնագիտության ամբիոնի ասպիրանտ  
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0009-9369-6855>

[mariam.abrahamyan@ysu.am](mailto:mariam.abrahamyan@ysu.am)

ՀՏԳ՝ 2-13; EDN: IIMUGI;

DOI: 10.58587/18292437-2024.5-103

**Հանգուցարաներ և բառակապակցություններ՝** սակրալ, պրոֆան, Միրչա Էլիադե, ֆենոմենոլոգիա, հիերոֆանիա, ծես, առասպելներ, տրանսցենդենտ

**“Сакральное” в феноменологии религии Мирчи Элиаде**

*Абрамян Мариам А.*

*Аспирант кафедры религиоведения факультета теологии,  
Ереванский государственный университет (Ереван, РА)*

**Аннотация.** Работа посвящена интерпретации ключевого понятия “сакральное” (священное), которое чаще всего встречается в современных религиозно-научных исследованиях. Основное понятие более подробно представлено в исследованиях Мирчи Элиаде, так как он в настоящее время считается одним из наиболее изучаемых феноменологов религии. Элиаде описывает сакральное как глубинный пласт реальности, который выражается как абсолютное отличие от мирского (профанного). Сакральное проявляется через религиозные символы, ритуалы и мифы, которые связывают человека с космосом и божественным. Элиаде подчеркивает, что сакральное представляет метафизические и духовные миры, которые выходят за пределы человеческой логики и опыта и могут быть раскрыты только в особых состояниях или через особые переживания. В работе обсуждаются различия между сакральным и профанным, их взаимодействие в религиозном опыте, а также влияние Элиаде на изучение религии. В статье выдвинута гипотеза о том, что сакральное с течением времени не отделилось и не стало чуждым для современного человека, а, проникая в различные сферы его деятельности, иногда даже стало ближе к нему. Научная новизна работы связана с глубоким анализом связи сакрального и профанного, их проявлений в современном мире и природы религиозного опыта.

**Ключевые слова и словосочетания:** сакральное, профанное, Мирча Элиаде, феноменология, иерофания, ритуал, мифы, трансцендентное

**"The Sacred" in Mircea Eliade's Phenomenology of Religion**

*Abrahamyan Mariam A.*

*Ph.D. candidate at the Department of Religious Studies, Faculty of Theology,  
Yerevan State University (Yerevan, RA)*

**Abstract.** This paper is dedicated to the interpretation of the key concept of "the sacred," which is frequently encountered in modern religious studies. The fundamental concept is most thoroughly presented in the works of Mircea Eliade, who is considered one of the most studied phenomenologists of religion today. Eliade describes the sacred as a deep layer of reality, which is expressed as an absolute distinction from the worldly (profane). The sacred manifests itself through religious symbols, rituals, and myths, which connect humans to the cosmos and the divine. Eliade emphasizes that the sacred represents metaphysical and spiritual worlds that transcend human logic and experience and can only be revealed in special states or through unique experiences. The work discusses the differences between the sacred and the profane, their interaction in religious experience, and Eliade's influence on the study of religion. The article proposes the hypothesis that the sacred, over time, has not distanced itself or become alienated from modern humans but, by penetrating various spheres of human activity, has sometimes become even closer to them. The scientific novelty of the work is related to a deep analysis of the relationship between the sacred and the profane, their manifestations in the modern world, and the nature of religious experience.

**Keywords & phrases:** sacred, profane, Mircea Eliade, phenomenology, hierophany, ritual, myths, transcendence

**Ներածություն:** Ժամանակակից կրոնագիտական ուսումնասիրություններում առավել հաճախ հանդիպող կարևոր հասկացություններից է «սակրալը»<sup>1</sup>, որը կրոնի սոցիոլոգիական

և ֆենոմենոլոգիական հետազոտություններում ուղղակի անփոխարինելի է: Կրոնի ֆենոմենոլոգիան «սակրալը» դիտարկում է որպես կրոնի էությունը սահմանող կարևորագույն հասկացություն [1]: Կրոնի դասական ֆենոմենոլոգիայում «սակրալին» նվիրված առավել հայտնի

<sup>1</sup> Սակրալ՝ լատ. sacer՝ սուրբ, սրբազան: Տե՛ս Сакральное [9].

աշխատություններից են գերմանացի հանրահոշակ բողոքական աստվածաբան և կրոնի ֆենոմենոլոգ Ռ. Օտտոյի «Սրբագանը» և նիդերլանդացի պատմաբան և կրոնի փիլիսոփա Գերարդ Վան Դեր Լեուվի «Կրոնի ֆենոմենոլոգիա» աշխատությունները [1, էջեր 437-438]:

Ժամանակակից կրոնի ֆենոմենոլոգիայի կարկառուն ներկայացուցիչներից է ռումինացի, ֆրանսիացի և ամերիկացի կրոնագետ, կրոնի պատմաբան և փիլիսոփա Միրչա Էլիադեն: Ներկայումս նա համարվում է ամենաշատ և առավել հաճախակի ուսումնասիրվող կրոնի ֆենոմենոլոգներից մեկը, ուստի անդրադարձը ինքնանպատակ չէ: Ի թիվս կրոնագիտության համար կարևոր հիմնահարցերի սեփական լուծումների՝ Մ. Էլիադեն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել սակրալի, սակրալի և պրոֆանի հակասությունների քննական վերլուծությանը, դիտարկել սակրալը առասպելի հոլովությամբ, հիերոֆանիաները և այլ առանցքային խնդիրներ: Գրականության վերլուծությունը ներառում է այն հիմնական աշխատանքները, որոնք լուսաբանում են կրոնի ֆենոմենոլոգիայի առանցքային գաղափարները, հատկապես Միրչա Էլիադեի տեսական մոտեցումները սակրալի և պրոֆանի վերաբերյալ: Բացի Էլիադեի գրքերից, վերլուծվում են նաև այլ հետազոտողների աշխատանքները, որոնք լրացնում և ընդլայնում են Էլիադեի գաղափարները: Մ. Էլիադեն առաջին հերթին շեշտում է սակրալի կարևորությունը մարդկային կյանքում՝ ենթադրելով, որ այն մարդկային փորձառության համընդհանուր կողմն է: Նա պնդում է, որ ժամանակակից մարդը, ապրելով հիմնականում աշխարհիկ կյանքով, կորցրել է կապը գոյության այս հարթության հետ: Այնուամենայնիվ, սակրալ փորձառության մնացորդները դեռ կարելի է գտնել խորհրդանիշներում, առասպելներում և ծեսերում, որոնք ներթափանցում են նույնիսկ աշխարհիկ հասարակություններ: Այս ամենի համատեքստում կարող ենք առաջադրել այն վարկածը, որ սակրալը ժամանակին գուզրնթաց ոչ թե հեռացել և օտարացել է ժամանակակից մարդուց, այլ ներթափանցելով մարդու գործունեության տարաբնույթ ոլորտներ՝ երբեմն էլ ավելի է մոտեցել մարդուն: Առաջարկվող վարկածի ինքնությունը կարող է հաստատվել նկարագրական և ֆենոմենոլոգիական մեթոդների օգնությամբ:

Միրչա Էլիադեի ֆենոմենոլոգիական մոտեցումը ընտրելը պատահական չէ, քանի որ այն կրոնին տալիս է հասկացությունների շրջանակ՝ ըմբռնելու, թե ինչպես է սակրալը դրսևորվում մարդկային փորձառության մեջ: Տարբերակելով սակրալն ու պրոֆանը, վերլուծելով հիերոֆանիաները [2, էջեր 255-257], առասպելները, ծեսերը, հավերժական վերադարձի հայեցա-

կարգը և սիմվոլիզմի դերը՝ Էլիադեն առաջարկում է համապարփակ պատկերացում, թե ինչպես են մարդիկ բախվում և առնչվում սակրալին: Նշենք նաև, որ նրա աշխատությունները շարունակում են ազդեցիկ դերակատարություն ունենալ կրոնի ուսումնասիրություններում և արժեքավոր պատկերացումներ տալ կրոնական փորձի բնույթի վերաբերյալ: Վերոնշյալի համատեքստում պետք է ընդգծենք նաև այն, որ խորհրդանիշները և առասպելները անփոխարինելի են կրոնի ֆենոմենոլոգիայի համար, ուստի սրանց անդրադարձը ևս ինքնանպատակ չէ: Հետաքրքրական է Մ. Էլիադեի «Սակրալը և պրոֆանը» աշխատությունը, որում Էլիադեն պնդում է, որ մարդկային փորձառությունը ձևավորվում է այդ երկուսի տարբերակմամբ: Հատուկ ուշադրության է արժանի նաև «Հավերժական վերադարձի առասպելը, Պատկերներ և խորհրդանիշներ, Սրբագանը և աշխարհիկը» աշխատությունները, որոնց մեջ ներկայացվում է ժամանակի ցիկլային և գծային հայեցակարգերը, քննարկվում են առասպելը և ծեսը, որոնք մարդուն թույլ են տալիս վերադառնալ լատենտության վիճակի:

Մ. Էլիադեն փորձում է համեմատական ու ֆենոմենոլոգիական մեթոդների օգնությամբ վերհանել կրոնների առաջացման պատճառները, իսկ հերմենևտիկական մեթոդի օգնությամբ՝ հասկանալ դրանց էությունը: Էլիադեի համար կրոնների պատմությունը ոչ թե առանձին կրոնների պատմությունն է, այլ մարդկության համընդհանուր ոգու պատմությունը: Նրա մեթոդը հիմնվում էր կրոնի ներքին օրինաչափությունների վրա [1, էջ 435]: «Կրոնների պատմության» մեջ Էլիադեի կիրառած ֆենոմենոլոգիական և հերմենևտիկական մեթոդները ունեն երկու սկզբունք՝ «ամբողջականությունը» և «ստեղծագործ միտքը»: Երկրորդ սկզբունքը պահանջում է կրոնական երևույթի իմաստի ստեղծագործական մեկնաբանություն, ինչը ենթադրում է հետազոտողի ակտիվ դերակատարություն: Վերջինս պետք է «վերակենդանացնի» հավատացյալների փորձերը, «ընտելանա» կրոնական երևույթներին՝ դրանց ճիշտ ընկալման համար: Էլիադեն կարծում է, որ յուրաքանչյուր կրոնական երևույթ ուսումնասիրելիս պետք է «մտնել» դրա մեջ, ներսում կրել տվյալ կրոնի դավանանքը, և միայն տվյալ կրոնի ներքին փորձառություն ստանալու միջոցով հետազոտողը կարող է պատկերացում կազմել կրոնական մարդու ունեցած փորձառության վերաբերյալ: Էլիադեն գտնում է, որ կրոնի ֆենոմենոլոգիայի կամ պատմության մասնագետը պետք է առասպելների և ծեսերի ուսումնասիրությանը մոտենա ոչ թե որպես օտար երևույթների, այլ դրանք լիովին հասկանալու համար պետք է անցկացնի իր միջով: Նա պատ-

կերավոր օրինակ է բերում՝ կրոնի ուսումնասիրողին համեմատելով դերասանի հետ, որը դերը խաղալու համար պետք է ամբողջությամբ մտնի այդ դերի մեջ [1, էջ 435]:

Էլիադեն սակրալը բացահայտում է արխաիկի և արդիականի հակադրության միջոցով, ընդ որում՝ արխաիկը կապում է սակրալի, իսկ արդին՝ պրոֆանի հետ: Փաստացի նրա համար սակրալ է *«այն, ինչը հակադրվում է աշխարհիկին»* [3, էջ 17]: Կարելի է նաև նկատել, որ եթե հետևենք Էլիադեին, ապա սակրալի հետ շփումը իրատեսական չէ այն դեպքում, երբ անձը դուրս է հիերոֆանիայի կրոնական փորձառությունից: «Սրբազան»-ի հետ մարդու հանդիպումը բնորոշելու համար Էլիադեն ներմուծում է *«հիերոֆանիա»* (հուն.՝ սրբազանի հայտնվելը) հասկացությունը [1, էջ 438]: Հետաքրքիր է նաև սակրալի մասին Ռ. Օտտոյի մոտեցումը, որը սակրալը դիտարկում է կրոնի ոլորտում, սակայն համարում է, որ այդ ոլորտից դուրս գալով՝ այն ձեռք էր բերում բարոյական իմաստ ու դառնում բարոյական արժեք: Ուշագրավ է նաև այն, որ սակրալը ընկալվում է որպես իռացիոնալ երևույթ, որը գոյություն մարդու ցանկություններից ունի անկախ՝ ենթագիտակցական մակարդակում: Հարկ ենք համարում նաև նշել, որ սակրալը արտահայտվում է արգելքների համակարգի մեջ, ինչն էլ իր հերթին նպաստում է ներքին և արտաքին հակադրությունների առաջացմանը:

Մ. Էլիադեն որպես թեզ առաջադրեց այն, որ *«Դիցաբանական մտածողությունը կարող է թողնել իր նախկին ձևերը՝ հարմարվելով մշակութային նոր օրենքներին, բայց այն չի կարող վերջնականապես և ընդմիջտ անհետանալ»* [4, էջ 5]: Ժամանակին այս գաղափարը վիճահարույց էր թվում, քանի որ եվրասիական մշակույթը դեռ գտնվում էր լուսավորության դարաշրջանի ազդեցության տակ, որը վերափոխել էր առասպելը, և կարծես իր առջև նպատակ էր դրել՝ արմատախիլ անելու դիցաբանական մտածելակերպը: Այնուամենայնիվ, ինչպես պատմական տարբեր ժամանակաշրջաններում, այսօր էլ կարող ենք ինչպես ժամանակակից, այդպես էլ պատմական աղանդների, կրոնների, դենոմինացիաների գաղափարական հիմքում տեսնել և՛ էկլեկտիզմի, և՛ սինկրետիզմի երևույթներ: Ելնելով վերոնշյալից՝ պետք է համաձայնենք Էլիադեի առաջադրած թեզին:

Մ. Էլիադեն առաջարկում է կրոնների դասակարգման երկու տարբերակ.

ա. Տիեզերական կրոններ. սրանց շարքում են արխաիկ հասարակությունների կրոնները, արևելյան, աֆրիկական կրոնները, եվրոպական ցեղերի նախաքրիստոնեական մշակույթը: Այս կրոններում *«Տիեզերքն ամբողջությամբ իրական կենդանի և սակրալ օրգանիզմ է»* [5, էջ 116]:

բ. Հուդայականություն և քրիստոնեություն. այս ուսմունքներում սրբազան հասկացությունը տրվում է պատմության կողմից: Հրեական և քրիստոնեական մշակութային գիտակցության մեջ ձևավորվում է աշխարհի նոր պատկեր, փոխվում է ժամանակի հայեցակարգը (ցիկլայինից դառնում է գծային), կարևոր դեր է հատկացվում վախճանաբանությանը:

Սակրալի ըմբռնման համար Մ. Էլիադեն հիմնվում է նաև Ռուդոլֆ Օտտոյի գաղափարների վրա [6]: Վերջինիս համար սակրալը և՛ ֆենոմենոլոգիական, և՛ գոյաբանական հասկացություն է: Ինչ վերաբերում է ֆենոմենոլոգիական կողմին, այն ճանաչվում է Օտտոյի առաջարկած numinous-ի փորձառության նկարագրությամբ, որն ուղեկցվում է ինչպես լիարժեք միտոլիկ ակնածանքով և սարսափով, այնպես էլ հմայքով և գրավչությամբ: Մ. Էլիադեն կարծում է, որ անհրաժեշտ է առավել խորքային դիտարկել սակրալը: Այն պետք է քննարկել իր ամբողջության մեջ և ոչ թե անդրադառնալ միայն դրա իռացիոնալ կողմերին: Երբ նա ընդգծում է դրա երկակի բնույթը, այն բացատրում է ոչ թե դրա իռացիոնալությամբ (ինչպես Օտտոն), այլ փորձի ամբողջականությամբ: *«Սակրալը մտնում է գիտակցության մի մասի մեջ, այն խնամենտ է և նրա պատմության փուլը չէ»* [7, էջ 6], - գրում է Մ. Էլիադեն:

Կրոնների պատմություն ասելով՝ Մ. Էլիադեն հասկանում է ոչ միայն գիտական դիսցիպլինը, այլև առասպելը: Նա կարծում է, որ պատմությունը հրեականության կողմից է ստեղծվել, որն էլ հետագայում ներդրվել է քրիստոնեական, իսլամական, ինչպես նաև բուդդայական ավանդույթների մեջ: Ավանդական դիցաբանական աշխարհայացքը ընդհանրապես չի հիմնվում և աղերսներ չունի «պատմություն» հասկացության հետ: Այսինքն՝ արխաիկ մարդու մոտ չկար գծային ժամանակի հասկացողություն: Այսպես, համեմատելով ժամանակակից և նախնադարյան մարդկանց՝ Մ. Էլիադեն ընդգծում է, որ առաջինը «իրեն համարում է պատմության արդյունք», մինչդեռ երկրորդն իր ծագումը դիտարկում է ինչ-որ սրբազան պատմության, սկզբնական շրջանի դիցաբանական իրադարձությունների հետևանք [4, էջ 22]: Կարևոր է նաև այն, որ նախնական մարդը պարտավոր էր ոչ միայն իմանալ այդ պատմությունը, այլև վերարտադրել այն, մինչդեռ ժամանակակից արևմտյան մարդը ոչ միշտ է զգում բոլոր իրադարձությունները հասկանալու ու կրկնելու անհրաժեշտությունը. դա նրա համար տեսանելի չէ: Հենց դա էլ այս երկու ժամանակների մարդկանց տարբերությունն է. նախնադարյան մարդու համար ժամանակը փուլային է, այսինքն՝ վաղուց կատարված իրադարձությունները կարող են կրկնվել հետա-

գայում: Ժամանակից մարդու համար ժամանակը գծային է, այսինքն՝ անդառնալի:

Մ. Էլիադեն հեթանոսությունը կրոն չի համարում, այլ կրոնական հավատալիքների ամբողջություն, որով առաջնորդվում էր արխաիկ մարդը: Կրոնն ունի վարդապետություն, համաշխարհային կրոնները ստեղծում են ինստիտուտներ՝ նման գիտական ինստիտուտներին, իսկ homo religiosus-ը ամբողջովին կարող է բավարարվել կրոնական ծիսակարգերով, որոնք աշխարհակառույցի մասին տալիս են չհամակարգված և իռացիոնալ պատկերացումներ: Մեծանուն գիտնականը նկատում է, որ կրոնական մարդ համարվելու համար բավական է, որ մարդ երազներ տեսնի: Այնուհանդերձ, կարելի է նկատել, որ թե՛ հեթանոս հավատալիքներով ապրող, և թե՛ ժամանակակից մարդիկ ունեն ընդհանրություն. դա սակրալի նկատմամբ վերաբերմունքն է: Ի վերջո, սակրալը այն հայեցակարգն է, որն առկա է բոլոր ժամանակներում և բոլոր կրոններում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ «անուն» է կրում:

Սակրալը կատարյալ իրականությունն է, որն իր մեջ ներառում է ուժ, հզորություն, կյանքի աղբյուր: Այս իրականությունը բոլորովին այլ սկզբունքներով է կառուցված՝ ի տարբերություն ստատիկ իրականության: Մ. Էլիադեն ենթադրում է, որ յուրաքանչյուր իր դառնում է սակրալ, երբ այն մարդու համար սկսում է նշանակել ավելին, քան դրա բնութենական նշանակությունն է [1, էջ 438]: Մարդը հիերոֆան է գտնում տիեզերական առարկաների մեջ (երկինք, երկիր, արև, լուսին), բույսերի, հանքանյութերի և կենդանական աշխարհում, որոշակի վայրերում և որոշ պահերի: Հիերոֆանիա կարող են լինել առասպելները, ծեսերը, քարը կամ փայտը, բարոյական օրենքները, ավելի բարձր էակները (քրիստոնյաների համար, օրինակ, բարձրագույն հիերոֆանիա է համարվում Հիսուս Քրիստոսը) [3, էջեր 16-17]: Տեսականորեն կրոնական անձի համար ամբողջ Տիեզերքը կարող է համարվել հիերոֆանիա: Միմյուր հիերոֆանիայի լեզուն է, առասպելը՝ սրբազան պատմությունը, որի ճանաչումը օգնում է շփում հաստատել սակրալի հետ, իսկ ծեսը արդիականացնում է սակրալը, որը դրսևորվում է առարկաների, մարդկանց, տարածության և ժամանակի մեջ:

Մարդը՝ որպես homo religiosus, մշտապես փորձում է արդիականացնել «սակրալ» կեցությունը [1, էջ 439]: Օրինակ՝ ավանդական մշակույթներին պատկանող մարդիկ իրենց կյանքում փորձում են վերստեղծել երկնային արխետիպ՝ տաճարը կամ կեցավայրը՝ «սիմվոլիզմի կենտրոնին» մոտեցնելու նպատակով: Այդ «աշխարհաստեղծ կենտրոնը» համարվում էր մի այնպիսի սակրալ տարածք, որտեղ տեղի է ունենում երկնային, երկրային և անդրաշխարհի

տարածությունների միավորումը: Նման կենտրոն կարող են համարվել համաշխարհային պյունը, համաշխարհային ծառը, համաշխարհային լեռը և այլն: Այդ տիեզերական առանցքի շուրջ էլ տարածվում են մարդու կյանքը, «մեր աշխարհը», և գտնվելով աշխարհի կենտրոնում՝ մարդն սկսում է հարաբերվել սակրալ աշխարհի և տարածության հետ: Տեղափոխելով աստվածային աշխարհի մասին իր պատկերացումները երկրային հարթություն՝ մարդը դրանք «տիեզերական է դարձնում» արարչագործության ակտի և դրանք ծեսերի մեջ անընդհատ կրկնելու միջոցով: Homo religiosus-ին մշտապես բնորոշ է սակրալի հետ միավորվելու ձգտումը, որով այն վերադառնում է տարածության նախասկզբնական վիճակին: Ժամանակի ընթացքում ծեսը կարող է փոխակերպվել, փոխել իր նշանակությունը, աշխարհիկացման գործընթացում կորցնել իր սակրալ արժեքը, որի մեջ կարելի է տեսնել տիեզերաբանական արխետիպի վերարտադրությունը: Ըստ Մ. Էլիադեի՝ homo religiosus-ը կարիք է զգում սուզվելու սրբազան, սակայն այդպես էլ չէկող ժամանակի մեջ, որը նա անվանում է «Այն ժամանակ» [1]:

Մ. Էլիադեի կաճիքով առասպելը, որը հին հույների գործածած իմաստից ժամանակի ընթացքում ապասակրալիզացվել է, արխաիկ մարդու կյանքում (և ոչ միայն) բոլորովին այլ դեր է ունեցել: Կրոնական մարդու համար առասպելում առկա նախնական նշանակությունն այլ իմաստ ունի: Մ. Էլիադեն այն բնութագրում է այսպես. «Առասպելը ներկայացնում է սրբացված պատմություն. այն այնպիսի իրադարձությունների մասին է, որոնք կատարվել են վաղնջական ժամանակներում՝ «ի սկզբանե» [4, էջ 15]: Առասպելը պատմում է, թե ինչ ձևով է իրականությունը մարմին առնում գերբնական ուժերի հերոսության շնորհիվ: Այս պատմությունը սրբազան մոդել է, որը նախնադարյան մարդը կրկնել է իր ծեսերում՝ գերմադկային ու գերբնականին մոտենալու համար: Նրա կարծիքով՝ առասպելը սակրալ պատմությունն է, դրա գլխավոր գործառույթը մարդու էկզիստենցիալ գոյությունն է: Իմանալ առասպելը նշանակում է մոտենալ ամեն գոյի էության ընկալմանը և արարչագործության խորհրդին: Այն մարդուն տալիս է վստահություն, որ այն, ինչ նա հիմա պատրաստվում է անել, արդեն կատարվել է և ինչն էլ օգնում է իրենից վանել այն կասկածները, որոնք կարող են կապված լինել գործողությունների արդյունքների հետ [4, էջ 143]:

Մ. Էլիադեի համար կարևոր է, որ առասպելը փրկում է պատմության դաժանություններից, մարդուց հեռացնում է վախը, նրան հաղորդում անվտանգության զգացում: Ակնհայտ է, որ homo religiosus-ը կրկնում է դիցաբանական մոդելը՝ ոչնչից չվախենալով,

քանի որ կրկնում է աստվածությունների, հերոսների կամ դիցաբանական նախնիների գործողությունները: Առասպելն իր մարմնավորումն է գտնում ծիսական գործողությունների մեջ, ինչպիսիք են գյուղատնտեսական աշխատանքները, որսորդությունը, պատերազմը և այլն [1, էջ 440]: Մ. Էլիադեի համաձայն՝ տիեզերաբանական ծիսական գործողությունները նախորդում են սիմվոլիկ վերադարձին դեպի քառօրյա կարգավիճակ, որպեսզի ամեն ինչ նորից վերստեղծվի, իսկ դրա համար անհրաժեշտ է ամեն ինչի ոչնչացում: Օրինակ նվիրագործական ծեսի ժամանակ, որպեսզի համայնքի անդամը դառնա հասուն, պետք է խորհրդանշորեն ոչնչացվի երեխան ծեսով անցնողի մեջ: Մեկ այլ օրինակ է մկրտության խորհուրդը, որի օգնությամբ երեխան ծեսի միջոցով ազատվում է աղամական մեղքից և հոգևոր իմաստով նորից է ծնվում: Այս ամենով հանդերձ՝ Մ. Էլիադեն գալիս է այն հետևությանը, որ մահը նախնական հասարակարգերում այլ կերպ է ընկալվել, քան այսօր: Արխայիկ մարդու համար մահը վերջնակետ չէր, նա չէր վերանում վերջնականապես, այլ դրանով մարդը վերադառնում էր քառօրյա կամ լատենտության վիճակի, որը կարող էր բերել վերածննդի: Միաժամանակ, այսօր էլ հավատացյալ մարդու դիրքերից մահը վերջնակետ չէ: Կարելի է նաև նկատել, որ շատ հաճախ առասպելների օգնությամբ ժամանակակից մարդիկ փորձում են բացատրել որոշ գործողությունների նպատակներ կամ իրողություններ, որոնք տրանսցենդենտ են և ժամանակակից մարդու գիտակցության համար խորթ:

Մ. Էլիադեն իր որոշ աշխատություններում խոսում է առասպելի և լոգոսի տարբերության մասին: Մասավորապես, «Առասպելի ասպեկտները» [4, էջեր 142-159] աշխատությունում հանդիպում ենք այն մոտեցմանը, որ երկու եզրույթներն էլ նշանակում են խոսք, սակայն առաջինն ունի պատում իմաստը և մեկնվում է իռացիոնալ եղանակով, իսկ մյուսն ունի «իմաստ» նրբերանգր: Առասպելը ներկայացվում է որպես հնագույն և արխետիպային պատմություն, որը արտահայտում է տիեզերքի և մարդկային կյանքի սրբազան կարգը, մինչդեռ լոգոսը համարվում է ռացիոնալ և տրամաբանական մտածողության արտահայտություն, որը զարգացել է ավելի ուշ՝ կոտրելով առասպելական մտածողությունը: Նշված աշխատության մեջ խոսվում է նաև առասպելների դեֆորմացիայի մասին: Հոմերոսն օգտագործում է դիցաբանական կերպարներին որպես գեղարվեստական ստեղծագործության հերոսներ: Սա Մ. Էլիադեն համարում է կենդանի առասպելի «սառեցման» առաջին փորձը. «... *Առասպելը պարզունակ մշակույթում կատարում է մի անփոխարինելի գործառույթ. այն արտահայտում, ուժեղացնում և համա-*

*կարգում է հավատը, պաշտպանում և պարտադրում է բարոյականությունը. այն երաշխավորում է ծիսակարգի արդյունավետությունը և պարունակում է մարդկանց առաջնորդելու գործնական կանոններ: Այսպիսով առասպելը մարդկային քաղաքակրթության կենսական բաղադրիչն է. այն սին հեքիայթ չէ, այլ ակտիվ ուժ. այն ինտելեկտուալ բացատրություն կամ գեղարվեստական պատկերացում չէ, այլ պարզունակ հավատի և բարոյական իմաստության պրագմատիկ կանոնադրություն» [8, էջ 20]: Դիցաբանական մտածելակերպով իրականությունը, որտեղ մեծ դեր է խաղում հավատը, ուղորդում է արխայիկ մարդուն այս աշխարհում:*

Ընդհանուր առմամբ կարելի է նկատել, որ առասպելը արխայիկ հասարակության համար այն պատմությունն է, որտեղ ներկայացվում են գերբնական գործողություններ, այն աներկբայորեն համարվում է բացարձակ ճշմարիտ ու սակրալ, և վերջինս մշտապես կապված է ինչ-որ բանի առաջացման, ձևավորման հետ: Ուստի, դրա իմացությունը մարդուն հնարավորություն է տալիս իմանալու իր և աշխարհի առաջացման մասին [8, էջ 18]: Ըստ Մ. Էլիադեի՝ կարելի առանձնանցնել առասպելի կառուցվածքային մի քանի սկզբունքներ՝

ա. իրականության երկատում, պետք է լինի երկու տարբեր կեցություն (օրինակ՝ կին և տղամարդ, երկիր և երկինք, արև և լուսին),

բ. axis mundi- աշխարհի առանցք (օրինակ՝ ծառ, լեռ, ծիսական գերան),

գ. ցիկլային ժամանակ (ոչ գծային ժամանակագրություն),

դ. տարածության և ժամանակի տարրասեռություն:

Մ. Էլիադեի աշխարհայացքում կարևոր է մշակույթի պատմության ընթացքում առասպելների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը: Նա նշում է, որ դիցաբանությունը սկսում է կորցնել իր սկզբնական նշանակությունը, իսկ առասպելները դադարում են իրենց տրանսցենդենտալ գործառույթն իրականացնել: «*Պատմության ինչ-որ ժամանակահատվածում, հատկապես Հունաստանի ու Հնդկաստանի, նաև Եգիպտոսի մշակույթային էլիտան դադարում է հետաքրքրություն դրսևորել աստվածների պատմության հանդեպ և այլևս չի հավատում առասպելներին՝ շարունակելով հավատալ աստվածներին (ինչպես Հունաստանում)*» [4, էջ 114], - գրում է տեսաբանը: Դա առասպելի ապարքազանացումն է, ապամիստիֆիկացիան: Հատկանշական է, որ հին հույները, օրինակ, դադարելով հավատալ լեգենդներին՝ չեն ժխտում Բացարձակը՝ «սկիզբների սկիզբը»: Ավելին, փիլիսոփայական առաջին միտքը, Մ. Էլիադեի կարծիքով, բխում է հենց դիցաբանությունից՝ թիրախավորելով արդեն ոչ թե սրբազան պատմությունները, այլ

տիեզերածնության տրանսցենդենտալ հիմքը: Եվ դրանում դրսևորվում են արխաիկ մտածողության մնացորդները, որոնք հատուկ են եղել տարբեր անտիկ մտածողներին, այդ թվում՝ Պլատոնին ու Արիստոտելին:

Մ. Էլիադեի մոտ մոռացումը բացասական երանգ է ստանում: Հնդկական ավանդույթի համար այդ նույն մոռացումը նշանակում է նախկին գոյի մոռացում: Նմանատիպ գաղափար է հանդիպում Պլատոնի մոտ, սակայն պլատոնյան մոռացման գաղափարը նախկինների մասին հիշողության կորուստ չէ, այլ գոյության սկզբի մոռացում:

Ինչ վերաբերում է առասպելականացմանը, Մ. Էլիադեն զարգացնում է նշված գաղափարը՝ նշելով արխաիկ մարդկանց հավատի կորուստն աստվածների հանդեպ: Նա ընդգծում է, որ միայն այդ անտիկ աշխարհում, որտեղ մարդիկ դադարել էին հավատալ աստվածներին, կարող էր արագ տարածում գտնել քրիստոնեությունը: Այն եկավ փոխարինելու արխաիկ մտածողությանը, որն այլևս չէր հավատում առասպելներին, սակայն քրիստոնեության դիցաբանական կողմի մասին վեճերը նույնպես տեղ ունեին առաջին աստվածաբանների շրջանում: Նրանցից ոմանք պնդում էին քրիստոնեության պատմականությունը՝ ընդգծելով Հիսուսի անառարկելի պատմական կերպար լինելը, սակայն մյուսներն առանձնացնում էին դիցաբանական տարրերը: Եվ այստեղ Մ. Էլիադեն ընդգծում է, որ չառնչվելով այս վեճերին՝ կարելի է վստահաբար պնդել, որ «քրիստոնեությունը, ինչպես այն ընդունում էին երկու հազարամյակ առաջ, չէր կարող ամբողջովին տարանջատված լինել դիցաբանական մտածողությունից» [8, էջ 164]: Այս հատկությունը պայմանավորում է նրանով, որ քրիստոնյաները «գյուղական շրջաններում՝ հատկապես Եվրոպայի հարավ-արևելքում» պահպանել էին նախորդ հավատի դիցաբանական տարրերը:

Ըստ այդմ, Մ. Էլիադեն, հետազոտելով ժամանակակից արևմտյան մշակույթի դիցաբանական տարրերը, նշում է, որ մարդիկ նույն կերպ հետաքրքրված են հեքիաթներով, ավանդություններով, որոնք կառուցված են դիցաբանական հենքի վրա: Այդպիսի ստեղծագործությունների հերոսները և՛ պատմական են, և՛ հոգեբանական: Նման գրավիչ վեպի ընթերցումը ընթերցողին հանում է պատմական իր ժամանակաշրջանից ու տանում հեքիաթային, տրանսպատմական շրջան: Ստեղծագործությունների այս գործառույթը ժամանակակից մշակույթում նրանց մոտեցնում է նախապատմական շրջանի հասարակություններին: Մեծ տեսաբանի կարծիքով այսօր մարդը նույն կերպ փորձում է հաղթահարել ժամանակը [5, էջ 205]:

Այսպիսով, կրոնի ֆենոմենոլոգիայի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Միրչա Էլիադեի «սակրալի» վերաբերյալ աշխատությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1. սրբազանի բնույթի վերաբերյալ Մ. Էլիադեի ուսումնասիրությունները հիմք են կրոնի, առասպելի, սակրալի և պրոֆանի հետազոտության համար:

2. Մ. Էլիադեն ակներև ցույց է տալիս, թե ինչպես է սակրալը դրսևորվում աշխարհիկ իրականության մեջ: Նրա աշխատանքներում նկատելի է սակրալի և պրոֆանի երկատվածությունը, սակրալն ու պրոֆանը ներկայացնում են աշխարհի սկզբունքորեն տարբեր փորձառություններ: Պրոֆանը վերաբերում է սովորականին, առօրյա գոյությանը՝ գուրկ հոգևոր նշանակությունից: Դա աշխարհիկ տիրույթն է, որտեղ ժամանակը գծային է, իսկ տարածությունը՝ միատարր: Ի հակադրություն վերջինիս՝ սակրալը ներկայացնում է հոգևոր իմաստով ներծծված իրականությունը: Դա աստվածայինի դրսևորումն է, որտեղ ժամանակը դառնում է ցիկլային, իսկ տարածությունը՝ հիերոֆանիային հատուկ, այսինքն՝ ունակ բացահայտելու ավելի խորը ճշմարտություններ:

3. Մ. Էլիադեի համար սրբազան տարածությունը ոչ միայն ֆիզիկական տեղանք է, այլև խորհրդանշական կենտրոն, որը կապում է երկրայինը աստվածայինի հետ: Հարկ ենք համարում հավելել, որ նման տարածքներին հատուկ են տաճարները կամ այնպիսի կառույցները, որոնք ընկալվում են որպես սրբության պորտալներ: Նրանք ծառայում են որպես աշխարհի կենտրոնի առանցք, որը կապում է երկինքը, երկիրը և անդրաշխարհը:

4. Մակրալ ժամանակին հատուկ է ցիկլային բնույթը՝ ի տարբերություն սրբապիղծ ժամանակի, որն ունի գծային բնույթ: Ծիսական գործողությունները հաճախ հիշատակում են որոշակի առասպելական իրադարձություններ՝ թույլ տալով մասնակիցներին նորից մտնել սակրալ ժամանակի մեջ և վերապրել անցյալի պահերը: Այս պարբերական վերադարձը դեպի սրբազան անցյալ ապահովում է կյանքի և տիեզերքի նորացումը, վերածնությունը: Օրինակ, հուլիսի 14-ը Ֆրանսիայի Հանրապետության համար ազգային տոն է և ամեն տարի նշվում է Բաստիլի գրավումը, բայց պատմական իրադարձությունն ինքնին չի վերարտադրվում: Արխաիկ հասարակության համար, ընդհակառակը, այն ինչ տեղի է ունեցել, կարող է նույնությամբ կրկնվել ծեսի միջոցով [8, էջ 13]:

5. Մ. Էլիադեի մտքի կենտրոնական հայեցակարգը հիերոֆանիան է: Վերջինս կարող է տարբեր ձևեր ունենալ՝ սկսած բնական առարկաներից, ինչպիսիք են ծառերն ու լեռները,

մինչև գտածոներ, ծեսեր և նույնիսկ առասպելներ: Հիերոֆանիայի միջոցով սակրալը «ներխուժում է» սրբապիղծ աշխարհ՝ բացահայտելով իրականության ավելի խորը շերտերը: Այս համատեքստում կարելի է նկատել, որ հավատացյալների համար այս դրսևորումները սոսկ խորհրդանիշներ չեն, այլ աստվածայինի հետ շփման փաստացի հնարավորություններ:

6. Մ. Էլիադեն ընդգծում է, որ հիերոֆանիաները առկա են բոլոր մշակույթներում՝ ընդգծելով սակրալի հետ կապ հաստատելու մարդկային հիմնարար անհրաժեշտությունը: Վերջինից կարելի է կատարել այն եզրահանգումը, որ սրբազան փորձը մարդկային գիտակցության հիմնական կողմն է, որն արտացոլվում է սովորականին գերազանցելու և գոյության ավելի բարձր կարգի հետ կապվելու բնածին ցանկությամբ:

7. Առասպելները Մ. Էլիադեի համար սոսկ պատմություններ չեն, այլ սրբազան պատմություններ, որոնք խորը ճշմարտություններ են փոխանցում իրականության վերաբերյալ: Նրանք պատմում են տիեզերքի, մարդկության և մշակութային հաստատությունների ծագման մասին՝ դրանով իսկ ուղենիշ դառնալով մարդու վարքագծի և հասարակական նորմերի համար:

8. Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ առասպելներում սակրալը հանդես է գալիս որպես իրականության հիմնարար շերտ, ուստի կարելի է մակաբերել այն միտքը, որ առասպելները յուրատեսակ կամուրջ են դառնում սակրալի և պրոֆանի միջև՝ անհատին հնարավորություն տալով հասկանալ իր տեղը և դերը տիրեզերքում:

Այսօրվա անհատը, ապրելով մի իրականության մեջ, որտեղ գերիշխում է աշխարհիկն ու նյութականը, կարիք ունի հիշելու տրանսցենդենտի և սակրալի մասին: Ժամանակակից հասարակության մեջ սակրալը դեռևս կարելի է գտնել տարբեր ձևերով՝ կրոնական պրակտիկաների, հոգևոր շարժումների տեսքով կամ նույնիսկ արվեստի, բնության և որոշակի համայնքների միջոցով: Մ. Էլիադեն արժեքավոր ուսպնյակ է առաջարկում այս երևույթները

ուսումնասիրելու համար՝ ընդգծելով սակրալի մշտական ներկայությունը մարդկային կյանքում:

Ի վերջո, Միքսա Էլիադեի սակրալի ուսումնասիրությունը թույլ է տալիս խորությամբ ըմբռնել, թե ինչպես է սրբազանը ձևավորում մարդկային փորձը: Սրբազան տարածության և ժամանակի, հիերոֆանիայի և առասպելի իր վերլուծության միջոցով Մ. Էլիադեն բացահայտում է տրանսցենդենտալ իրականության հետ կապվելու մարդկային կարիքը: Նման աշխատանքները նպաստում են, որ հասարակությունները վերանայեն իրենց կյանքում սրբության դերը՝ նպաստելով անհատների բարոյակրթմանը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Религиоведение.** Под ред. Шахнович М. М. – СПб. 2012. – 448 с.
2. **Элиаде М.,** Миф о вечном возвращении; Образы и символы. Священное и мирское. – М. 2000, с. 257.
3. **Элиаде М.,** Священное и мирское. – М. 1994. – 208 с.
4. **Элиаде М.,** Аспекты мифа. Пер. с фр. В.П. Большакова. 4-е изд. – М. 2010. – 248 с.
5. **Mircea Eliade,** The Sacred and the Profane: The Nature of Religion, Harcourt, Brace & World, Inc. – New York, 1957. – 256 p.
6. **Отто Р.,** Священное. Об иррациональном в идее божественного и его соотношении с рациональным. – СПб. 2008. – 430 с.
7. **Элиаде М.,** История веры и религиозных идей. От каменного века до элевсинских мистерий. Т. 1. – М. 2012. – 528 с.
8. **Eliade M.,** Myth and Reality. – New York, 1963. – 192 p.
9. **Зыгмонт А. И.,** Сакральное // Научно-образовательный портал «Большая российская энциклопедия» <https://bigenc.ru/c/sakral-noe-5b3b55> (մուտք՝ 13.09.2024).

Տճանա/Հանձնվել է՝ 29.09.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 03.10.2024

Принята/Ընդունվել է՝ 10.10.2024